

Բառարանէն յետոյ՝ հատորին վախճանը կը կարդացուի յիշատակարան մը՝ զոր տոհմային պատմութեան կարեւոր էջերէն համարելով կ'ընդօրինակեմ զայն հոս կէտ առ կէտ.

“Վերջաբանն-իւն հասարօր, եւ յիշարակարան Տղե-
ցոցանդի տառն:”

“Փառք պատիւ եւ երկրպագութիւն, գոհութենական անլուելի փառատրութեամբ, երբեակ եւ մի անբաժանելի Աստուածութեանն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Որ արժանացոյց զօրացուցանելով զմերս տկարութիւն, հասանել ի յաւարտ՝ տպագրութեամբ ի լոյս ընծայեցման, փոքրբանակ, բայց բազմահարուստ բժշկարանիս:”

“Արդ՝ ընթերցողք եւ վայելողք զսոյն, պարտաւոր զձեզ համարեսցիք, ի մաքուր եւ յազու յաղօթս ձեր՝ յիշատակելոյ զարժանին յիշման՝ զտունկն օրհնութեան, եւ զնպատակն առաքինական կատարելութեան, զի Սուրբ ընակեալ զՋուղայեցի Պայծառ Իշխան՝ զԱղայ Յօհաննջանն ղսեմախորհուրդ եւ Գերահանճար: Որ իւրական արդար եւ տիրապարզ եւ վաստակօք, արդեամբք եւ գոյիւք, ներ շիւսիական Տէրութեանն՝ ի Նոր Նախիջևան քաղաքի, զերկուս՝ լուսաւորութեան մտաց՝ բողոքից հայկազանց՝ բարեառիթ Գպրոցս, եւ արտաքին մակացութեանց բարեկարգ Ուսումնարանս, յանուն Սուրբ Աստուածածնի, եւ յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորիչին մերոյ՝ նախայօժար արորժանօք հաստել հաճեցաւ, եւ զոր խորհեցան՝ զուարթամիտ տրովք իւրովք՝ ի յանկ հանեալ՝ ի կատարն հասոյց. ընդ նոսին եւ զցանկակիս զայս Տպարան՝ արփիանման պայծառացուցեալ, եւ ամենայն հարկաւոր պարագայիւքն լիացուցեալ՝ առնուիրեաց ի վայելք բողոքի յարեթական սերնդոցս լուսաւորչակրօնից:”

“Վասն որոյ՝ ի վերոյիշատակեալ Պայծառ Իշխան Աղայ Յօհաննջանէ պայծառազարգեալ Տպարանն նորահաստա՝ ինքնայօժար կամօք փափաքեաց, ի պատիւ եւ ի փառս՝ տիրաբար երախտեաց՝ բարերարին իւրոց զառ ի Ջուղայեցի ճարտար բժիշկ Պարոն Պեարոսէ, Ազնուսերունդ յՈրդւոյ՝ Յօհաննէս Քալանթարի, շարագրեալ զբազմաօգուտ բժշկարանս՝ ընդ Բառարանին իւրոյ, (զոր ընծայեալ էր Հոյակապ Գրքատան՝ Հիւսիսային կողմանս եղեալ ամենայն ազգիս հայոց՝ Առաքելաշաւիղ՝ Ազգասէր Առաջնորդի Իշխանագնեայ Տեառն Յովսէփայ Սրբա-

զան Արք Եպիսկոպոսի Սանահնեցոյ Երկայնաբազուկ Արղութեանց. որպէս տեսնի եւ ի յառաջաբանութեան իւրում.) տպմամբ ի լոյս ընծայել՝ թուով վեց հարիւր, յատկական ծախիւք՝ նոյն Պայծառ Իշխան՝ Ջուղայեցի Աղայ Յօհաննջանին:”

“Որոյ զտուրան՝ ամենամեծն աստուած՝ ընդ այլոց զուարթամիտ առատաձեռնութեամբ՝ յայս գործ ազգաօգուտ՝ ինքնակամ օգնողացն՝ անձանց բարեսիրաց. բնակելոց՝ ի զանազան գաւառս՝ ի կողմն Հնդկաց՝ յարեթատոհմ եւ հայազարմ լուսաւորչադաւանից՝ առատարշիտրոցն՝ ի փառս եւ ի պատիւ իւր վերընկալցի. զբարեգիտակ նպատակն՝ յուսոյ եւ ակնկալութեան բնակիցն՝ անվրէպ պահմամբ՝ ի յանկ հանցէ. եւ զբարի յիշատակս իւրաքանչիւրոցն՝ ի յանջնջելի երանական մատենի իւրում արձանացուցէ:”

“Ի վախճան բանիս՝ խնդրելով յամենորում բարերարէն աստուծոյ՝ յաւելումն եւ երկարութիւն անգին եւ պատուական կենաց՝ մեծախորհուրդ առնս աստուծոյ, եւ բարեբողոք զստերացն, եւ բողոքից արեւակից մերձաւորացն, յիշման արժանի համարեսցիք զի քրիստոս հանգուցեալ կողակիցն նորին զԳուլիստան Տիկիլինն, զՀայրն՝ Քալանթար Յակօբն, զՄայրն՝ Մէրբան Տիկիլինն, զՊապն իւր Գէրաք Աղայն, եւ զՀանիկն իւր՝ Թագուհի Տիկիլինն. որոց ամենեցուն առ հասարակ ամենաբարին աստուած՝ ըստ մեծի ողորմութեան իւրում ողորմեսցի. եւ անձառելի ներողութեամբն զթմացի:”

“Եւ ձեզ ընդ մեզ՝ բարեմտութեամբ աղօթողացրդ՝ մասն բարեաց՝ անտի պարգեւեսցի. ամէն:”

Այն յիշատակարանէն դատելի է՝ որ Նախիջևանու տպարանին հրատարակած առաջին գիրքն եղած է բժշկարանս, որոյ համար արձանագրուած տողերը կը ցուցանեն՝ թէ քանի մեծ կարեւորութիւն ունեցած է այն՝ դար մը յառաջ: Այսօր իսկ, մինչ բժշկական ամէն օրէնք եւ գրութիւն վեր ի վայր յեղաշրջուած՝ հնոց սեղ միշտ նորեր կը անօրինուին, այսօր իսկ, կ'ըսեմ, դեռ կարելի է անմահին Ջուղայեցոյ բժշկարանին, դիմել եւ նորա պատուիրած դեղերէն օգտիլ եւ նպաստիլ մեծապէս: Չեմ ուզեր առ այժմ՝ գրել հոս իմ բժշկական կարծիքն ու դատողութիւնը սոյն գեղօրէից մասին: Նոցա համար մեր ապագայ՝ Հայ բժշկական Պատմութեան մէջ ընդարձակ էջեր խոստանա-